ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
REPUBLIC OF ARMENIA
SECRETARY GENERAL OF MINISTRY OF ENVIRONMENT
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ МИНИСТЕРСТВА ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

№ 5/07.5/7409
«_____» «_____» 2026թ.
«Հետքի» լրագրող պարոն Հայկ Մակիյանին

Հարգելի պարոն Մակիյան

Ի պատասխան Ձեր 2026 թվականի օգոստոսի 11-ի գրության՝ հայտնում եմ, որ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ում «Սանի Լենդ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղու 7-8-րդ կմ հատվածի 1/1 հողամասում շահագործվող ասֆալտի արտադրամասի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն առկա չէ:

Ասֆալտի արտադրությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի «ե» ենթակետին (80 տ/ժ և ավելի արտադրողականությամբ ասֆալտի կամ 80 խմ/ժ և ավելի արտադրողականությամբ բետոնի ստացիոնար արտադրություն) և 4-րդ մասի 10-րդ կետի «ա» ենթակետին (30-ից մինչև 80 տ/ժ արտադրողականությամբ ասֆալտի կամ 30-ից մինչև 80 խմ/ժ արտադրողականությամբ բետոնի ստացիոնար արտադրություն) համապատասխանելու դեպքում:

Շահագործման թույլտվությունների (ավարտական ակտ) տրամադրման իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8/19/2026

X

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ARKADI 2901780121

Հարգանքով՝
պարտականությունները կատարող Արկադի Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
3 Government Bld., Republic Sq., Yerevan, Armenia, 0010
0010, Армения, г.Ереван, Пл. Республики, Дом Правительства 3
minenv@env.am | www.env.am
+374 11 818 555

Հասարակայնության հետ կապերի բաժին
Ռիմա Հարությունյան, 011 818 555/ 5170